




# ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՍ ՅԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ



Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թ. քիվ 1 (22)

## ՈՒՋՈՒՄ ԵՍ ԽԱՎԱԳՎՈՒՄԻՑՈՒՆ, ՊԱՏՐԱՍՏՎԻՐ ՊԱՏԵՐԱԶԱՒ

### ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ



վաքել էր 20 տոննա խոտ, որ վաճառի, սակայն չհասցրեց, քանի որ պետք է մեկներ դիրքեր: Իր կյանքի նման բոլոր գործերը կիսատ մնացին: Ասում էր. «Հենց պատերազմը վերջանա, կգամ ու էլի կշարունակեմ ձմեռվա ընթացքում»:

Մանկուց կիսել է ծնողների հոգսը, նույնիսկ անկողնուն գամված տատիկի խնամքին է մասնակից եղել:

Ընկերը Էդվարդ Սևանյանը, պատմում է, որ նա շատ հարգված երիտասարդ էր հասարակության մեջ, կռվարար չէր, չնայած որ իրենց ընկերությունը ծնվել է մի թեթև վեճից: Անշահախնդիր էր բոլոր հարցերում, ապրում էր բոլորի հոգսերով և հաջողություններով: Ֆիզիկապես պատրաստված էր:

Հայրենիքին և ընտանիքին նրա ավերակները ամսահման էր: Ձգտում էր անել ամեն ինչ ընտանիքի և հայրենիքի համար:

Ծառայակից ընկերները պատմում են, որ իրենց կյանքը ժրոն փրկել է, բոլորին ուղարկել է էլտեղից, ինքն ու մի տղա են մնացել, երկուսն էլ զոհվել են:

Պատերազմը իր սև բիծը թողեց նաև ճամբարակի Գետիկ գյուղում բնակվող Սողոմոն Սարիկի Դալաբյանի ընտանիքի վրա: Սողոմոնը պայմանագրային զինծառայող է եղել, նա իր տղաների մեջ սերմանել է պայքարելու, արարելու և հայրենիքը ամեն ինչից վեր դասելու գաղափարը: Ժորա և Սարո Դալաբյանները շարունակել են իրենց պայքարի գործը, հայոց բանակին իրենց պարտքը տալուց հետո անցել են պայմանագրային ծառայության: Հերթափոխով են ծառայել, որպեսզի յուրաքանչյուրը իր արձակուրդի ժամանակ կարողանա օգնել ծնողներին տնտեսության մեջ:

Իսկ պատերազմում երկու եղբայրն էլ միասին են կռվել: Ժորան անահացավ նոյեմբերի 8-ին, եղբայրը՝ Սարոն վիրավորվում է Քարվաճառում, դեռ լիովին չապաքինված՝ նորից վերադառնում է Շուշի:

Ծնողները, արցունքները խեղդելով, բայց միևնույն ժամանակ հպարտությամբ էին խոսում Սարոյի և հիշում անմահացած որդու՝ ժորայի մասին:

«Ժորան շատ յուրահատուկ անձնավորություն էր՝ ամեն ինչով չափված-ձևած, նախասիրությունը երգելն էր, շատ էր սիրում երգել, բոլորին ուրախացնում էր իր երգերով, իր հարսանիքի օրը «Հայ կամավորն» էր երգում:

«Փոքրուց իր մեջ բույն էր դրել հայրենասիրությունը, հայրենիքը շատ էր սիրում, փայտից գեներ էր պատրաստում, մտքերը միայն այդ մասին էին, երևի դրա համար էլ

այդ ճանապարհով գնաց: Շատ էր սիրում ինքնուրույն աշխատել, երբեք ուրիշից որևէ բան չէր խնդրում, թեկուզ սկզբից շատ դժվար կյանքով ենք ապրել, բայց նա շատ հպարտ էր, ցույց չէր տալիս դիմացինին, որ իրեն որևէ մեկը չխոչնդեմ: Շատ մաքրասեր էր և կոկիկ: Հանգիստ բնավորություն ուներ, խաղալիք մեքենա էինք գնում, որ խաղար, քանդում էր, մաս-մաս անում: Ասում էր.

- Քանդում եմ, նորից հավաքեմ, որ սովորեմ. տես ոնց եմ հավաքելու:

Այդպես ամեն ինչի հասավ, ամեն ինչ իր ձեռքով էր սարքում: Ձեռքի շնորք ուներ, ամեն ինչ ձեռքից գալիս էր, շատ ընդունակ էր: Ձեր ընկճվում և փոծում էր բոլորի մեջ սերմանել բարություն:

Նոր էր ամուսնացել, շատ նպատակներ ուներ, բայց չհասցրեց:

Նրա մասին խոսելիս ասում են, որ ամենից շատ կարևորում էր հայրենիքը, տան, ընտանիքի մասին կարող է մտածել, բայց առաջնային է հայրենիքը, չի նահանջել ոչ մի բանից, նույնիսկ ընկերներին ասել է ով հետ գնաց, նա մարդ չէ, բոլորն էլ պիտի պայքարեն և հաղթահարեն դժվարությունները:

«Շատ էր սիրում ծաղիկ նվիրել: Հոգատար էր և ուշադիր մոր և կնոջ նկատմամբ:

-2 տարի Ասկերանում էր ծառայել, 4 տարի՝ Վահանի դիրքերում, ինչքան գանգել ենք, երբեք չի բողոքել, չի ասել տեղս նեղա, լավ չէ, ասում էր՝ ամեն ինչ լավա, հանգիստ եղեք:

Եղբայրը՝ Սարոն ասում է, որ նա լավ մարտական ընկեր էր: Որոշեց, որ մենք տարբեր հեծակետերում պետք է կռվենք, որպեսզի գոնե մեկս վերադառնա տուն:

Տիկին Արմինեն և Անահիտը հիշողություն դարձած որդիներից երկար խոսեցին, պատմեցին և հուզվեցին: Նրանք խաղաղություն մաղթեցին մեր երկրին, իսկ բոլոր զինվորներին՝ խաղաղ և անփորձանք ծառայություն:

Թող ոչ մի մայր նման ցավ չզգա, աշխարհին թող խաղաղություն լինի, մեր գալիք սերունդը նման դժվարություններ չտեսնի, խաղաղ երկնքի տակ ապրի, ամեն ցավին բուժում կա, կարող ես դեղ խմել, բայց չեմ ցանկանա, որ ուրիշ ծնողներն էլ այս ցավն ապրեն:

Արցախյան վերջին պատերազմում ճամբարակ խոշորացված համայնքից իրենց անունները փառքով են պատկերվել նաև թվարկված հայորդիները:

1. Աղամյան Սուրեն Ռուբենի- 23/10/1997



2. Բայլան Ժիրայր Լևոնի- 01/09/1986
3. Գրիգորյան Գոռ Սերգոյի- 29/10/2000
4. Դալաբյան Ժորա Սողոմոնի- 20/11/1992
5. Երիցյան Նարեկ Արզամի- 18/01/2002
6. Լազարյան Վահե Լյովիկի- 08/09/1976
7. Խեչոյան Դավիթ Էդիկի- 21/03/1993
8. Համբարձումյան Սևակ Սերգեյի- 29/07/1976
9. Հանյան Նուբար Անդրանիկի- 03/06/1998
10. Հարությունյան Արտավազ Կարոյանի- 16/07/1997
11. Հարությունյան Մանվել Սուրենի- 27/12/1991
12. Հովհաննիսյան Գեղամ Սերուժանի- 20/02/2001
13. Դազարյան Սուրեն Սովետի- 03/12/2001
14. Ծաղարյան Նարեկ Հենրիկի- 27/11/1991
15. Մարկոսյան Հովհաննես Գուրգենի- 07/10/1979
16. Մարտիրոսյան Գևորգ Կարոյի- 01/07/1996
17. Չիլինգարյան Արծրուն Ռաֆիկի- 23/02/1985
18. Պողոսյան Գևորգ Հովիկի- 27/11/1997
19. Տեր-Պողոսյան Արսեն Արմենակի- 15/09/2000
20. Ապրեսյան Տիգրան Թադևոսի- 15/01/2001
21. Իսկանդարյան Սամվել Դավթի- 05/08/2000

Գլուխ ենք խոնարհում բոլոր այս մայրերի առջև, որոնց գավակները անմահացան հանուն հայրենիքի փրկության:

1+1 դպրոցական թերթի խմբագրություն



# ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 29 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կազմավորվել են բավականին բարդ ժամանակաշրջանում, երբ աշխարհաքաղաքական դաշտում Խորհրդային Միությունը ապրում էր իր գոյության վերջին ամիսները՝ փլուզման շրջանը, իսկ տարածաշրջանում սկսվել էր միջերկրկան, տարածաքային պատերազմի հայերի և ադրբեջանցիների միջև:

1990 թվականի սեպտեմբերին կազմավորվեց Երևանի հատուկ զույգը, իսկ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում, Մեղրիում ձևավորվեցին հինգ վաշտեր: 1991 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե:

Հայաստանի զինված ուժերը կազմված են Հայաստանի պաշտպանության նախարարությունից, հինգ բանակային կորպուսներից: Պաշտպանության նախարարությունը իր հերթին կազմված է վարչական ապարատից, հետախուզության, հրթիռային զորքերի և հրետանու, ավիացիայի, Ջորքերի ծառայության և զինվորական



ծառայության անվտանգության ապահովման, հակաօդային պաշտպանության զորքերի, ռազմավարական պլանավորման, մարտական պատրաստության, քիկունքի, կապի և ավտոմատ կառավարման համակարգերի, ինժեներական զորքերի, սպառազինության, ռադիոստանցիաների, քիմիական, կենսաբանական պաշտպանության, կազմազորահավաքային, օպերատիվ, անձնակազմի հետ տարվող աշխատանքների, ֆինանսական, կադրերի վարչություններից, ռադիոէլեկտրոնային

պայքարի, ռազմական հաղորդակցությունների, ռազմատեղեկագրական, ութերորդ, ստանդարտացման և չափագիտական, ռազմանվագախմբային բաժիններից, Հայաստանի զինվորական կոմիսարիատից և այլ ստորաբաժանումներից, որոնք կատարում են խնդիրների առաջադրման և պլանավորման, դրանց իրականացման, վերահսկողության գործառնություններ:

Հայաստանի զինված ուժերը կազմված են հետևյալ մասնագիտացված զորքերից.

- ցամաքային զորքեր,
  - ռազմաօդային ուժեր,
  - հակաօդային պաշտպանության զորքեր:
  - ցամաքային զորքերն իրենց հերթին բաղկացած են հետևյալ զորատեսակներից.
  - մոտոհրաձգային զորքեր,
  - տանկային զորքեր,
  - հրթիռային զորքեր և հրետանի,
  - օդադեսանտային զորքեր,
  - ինժեներական զորքեր,
  - կապի զորքեր:
- Հայաստանում զորակոչը նախատեսված է 18 - 27 տարեկան արական սեռի ներկայացուցիչների համար՝ 2 տարի ժամկետով, որը կարգավորվում է Հայաստանի զինապարտության մասին օրենքով: 2011 թվականին օրենքում լրացում կատարելուց հետո, այն քաղաքացիները, որոնք հիմնական կրթության հիմնի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողներ են համարվում, օրենքը գործում է 19 տարեկանից: Ջորակոչը կատարվում է տարեկան 2 անգամ: Ընտրվողները ենք Հայոց բանակի կազմավորման 29-րդ տարեդարձը:

## ԻՆՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՏԱՆՈՒՄ ՄԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Այսօր գրեթե բոլոր մարզերում կան ինչ-որ համալսարաններ և ինստիտուտների մասնաճյուղեր: Ինչքանով են այդ կրթական օջախները համապատասխանում մեր պետական անվտանգությանը:

Մենք դեռ կխոսենք հետագայում մեր պետական համալսարանի և ճարտարագիտական /պոլիտեխնիկ/ համալսարանի մասին, թե աշխարհում որ հազարերորդ տեղն են զբաղեցնում, բայց այսօր խնդիրը դրանք չեն:

Մի քանի տարի առաջ առողջական խնդիրների պատճառով են մեկնեցի Իսրայել: Գտնվելով այնտեղ մոտ 2 ամիս՝ ծանոթացա տարբեր բնակավայրերի մարդկանց հետ, զրուցեցիք տարբեր հարցերի մասին: Բոլորը բողոքում էին, որ կյանքը թանկ է, որ

ամբողջ օրը պետք է աշխատել: Իմ այն հարցին, թե ինչու պետությունը չի թեթևացնում մարդկանց հոգսերը, թեկուզ բնակարանների հարցում. թող կառուցի շենքեր քաղաքի արվարձաններում ու ավելի շատ մարդիկ ներգրավի: Իմ այս հարցին ես ստացա հակիրճ պատասխան. «Մենք ընդունում ենք միայն ամենալավին»: Այսինքն՝ այնտեղ հնարավորություն ունեն բնակություն հաստատել միայն ամենաաշխատասեր և բանիմաց մարդիկ: Վատ չէ, որ մեր երեխաները ունեն բարձրագույն կրթություն, բայց ինչքանով են այդ երիտասարդ դիպլոմավորները համապատասխանում այսօրվա մարտահրավերներին, այդ արդյունքը մենք տեսանք պատերազմի օրերից սկսած մինչև այսօր:

Այսինքն՝ եթե հարյուրավոր երիտասարդներ 20 տարվա ընթացքում ներգրավվել մեր պետական և սեփական համակարգի մեջ, այսօր մենք ունենում ենք պետություն, որտեղ յուրաքանչյուր համակարգում գերակշռող մեծամասնությունը իրենց մասնագիտական առումով չեն համապատասխանում ոչ մի չափանիշի. այդ ամեն ինչի սկիզբը պետական համակարգի կողմից անմիտ բազմացումն է բարձրագույն ուսումնական հաստատությունների, որոնց մասնաճյուղերը քայքայում են ամբողջ մրցունակ միջավայրը ուսանողների կողմից: Այսինքն խելոք մարդիկ ներագդել են մեր ժողովրդի մտքին, որ ուսման տան իրենց երեխաներին, այսօր պարզ է դառնում, որ այդ խելոք մարդիկ խաբել են ոչ թե մեզ

ծնողներիս՝ կորզելով մեր փողերը, մեր երեխաներին, այլ վնաս են հասցրել մեր պետականությանը՝ տալով մասնագետներ, որոնք չեն համապատասխանում ոչ մի նորմի:

Հուսանք, որ կրթության նախարարությունը կանի հետևություն այն բացերից, որոնք մենք ունենք այսօր մեր պետական և ոչ պետական համակարգերում, և միգուցե հասկանան, որ այսօր մեզ ավելի շատ պետք են հմուտ արհեստավորներ, մասնագետներ գյուղատնտեսության և փոքր ու միջին ձեռնարկատիրական բնագավառում:

**Հակոբ Սարիբեկյան**  
**Վերին Գետաշեն**

## ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ

-Բարև ձեզ. ես սովորում եմ 10-րդ դասարանում, մեր ընտանիքը մեծ է. ունեն հորեղբայրներ, հորաքույրեր, մորաքույրեր և քեռիներ՝ իրենց երեխաներով. շատ ուրախ եմ, որ մեր մեծ ընտանիքը այս պատերազմում չունեցավ կորուստներ: Բայց հետպատերազմյան իրադարձությունները, կարելի է ասել, մեր մեծ ընտանիքը բաժանեցին երկու մասի, համարյա կեսը մտածում է, որ մենք ինչքան շուտ հայտնվենք Ռուսաստանի նահանգի կարգավիճակում, այնքան լավ, այդ դեպքում կապրենք ապահով, ու թոշակներն էլ բարձր կլինեն, իսկ մյուս կեսը ինչ-որ բան է ուզում, ես էլ չեմ հասկանում, ամենագլխավորը, որ բոլորը ամեն ինչ գիտեն և պատրաստ են միմյանց սովորեցնել ինչպես ճիշտ ապրել: Մենք երեխաներով չենք խառնվում այդ վիճաբանությանը, բայց

ինձ մոտ ստեղծվել է այն կարծիքը, որ մենք էլ չգիտենք, թե իրականում ինչ ենք ուզում: Այս հարցով ես դիմեցի թերթի խմբագրությանը.

### Պատասխան

- հարգելի աշակերտ, եթե դուք հայտնվել եք մեծ իրավիճակում, առաջին հերթին պետք է հասկանաք, որ նրանք բոլորն էլ ձեր բարեկամներն են, և պետք չէ փչացնել հարաբերությունները ոչ մեկի հետ, դրա համար եղեք չեզոք:

- Երբ ընտանիքը հեռուստացույցով նայում է ինչ-որ ալիք, որը բերելու է գաղափարական վեճի, դուք մի՞ նայեք, կարդացե՞ք գիրք կամ զբաղվե՞ք դասերով:

- Հնարավոր է, որ դուք չունենաք հնարավորություն մնալ չեզոք, այդ դեպքում ընդունեք պետականամետ դիրք, այսինքն՝ վատ է, թե լավ, օրենքի սահմանադրական / կոնստիտուցիոն / գերակայման պայմաններին և ժողովրդի մեծամասնության կամքի կատարմանը:

**1+1 թերթի խմբագրություն**

**2**



# ՄԻՃՏ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ ԵՆ

Մեր հերթական հարցազրույցը ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճամբարակի թիվ 35 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փրկարարական ծառայության կապիտան Միշա Մուժիկի Մուժիկյանի հետ է, ով մասնակցել է Ասկերանի շրջանի խաչմաչ և Սարիշեն գյուղերում ընթացող պայքարին, ով այս պատերազմը համարում է հինգերորդ սերնդի պատերազմ: Նա միշտ մեր բանակը որակել է որպես մարտունակ և հզոր բանակ, սակայն այն կարծիքին է, որ պետք է փոխել բանակի և նրա կառուցվածքի մասին աշխարհայացքը և զարգացման փուլը ժամանակի մարտահրավերներին համապատասխան:



-Այո, դուք շատ ճիշտ եք, շատ դպրոցներ չունեն թաքստոցներ և ապաստարաններ: Ոչ միայն ճամբարակ քաղաքը, այլ նաև նրա հարակից գյուղերը այդքան էլ ապահովված չեն թաքստոցներով և ապաստարաններով, սակայն սահմանամերձ քաղաքը ունի այլ շինություններ, որոնք ծառայում են որպես թաքստոցներ, բայց ճամբարակում կան դպրոցներ, որոնք գտնվում են հենց հակառակորդի թիրախում, նրանց հենակետի նշանառության տակ դիմացի դպրոցն է, որը կառուցվել է 70-ականներին, սակայն թաքստոցների առկայությունը հաշվի չի առնվել: Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ջանքերի շնորհիվ դպրոցի հետնամասում կառուցվել է մեկ թաքստոց, սակայն այն չի բավարարում աշակերտ թվին, այնտեղ կարող են պատսպարվել 12-13 մարդ: Թաքստոցների անհրաժեշտությունը շատ է զգացվում, քանի որ մենք ունենք անկանխատեսելի թշնամի: Մենք հաճախակի ենք բարձրացնում այս հարցը պատկան մարմինների մոտ, և կարծես նրանք նույնպես մտահոգված են և փորձում են այս խնդիրն լուծում տալ: Որոշ հաստատություններում, որտեղ կան թաքստոցներ և ապաստարաններ, կահավորում են, ջեռուցման և հոսանքի հարցերը կարգավորում, որպեսզի վայրը դառնա բնակության նորմերին համապատասխան,- նշեց մեր զրուցակիցը:

Այն հարցին, թե ինչ աշխատանքներ են կատարվում, որպեսզի հասարակությունը տեղյակ լինի թաքստոցների և ապաստարանների մասին, կամ ինչ միջոցառումներ են կատարվում տարհանումների իրազեկման վերաբերյալ, Միշա Մուժիկյանն ասաց, որ ճամբարակի հրշեջ-փրկարարական ջոկատի կողմից 2020 թվականի մարտի 1-ից իրականացվում են Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, և իրենք իրենց կազմած ծրագրով դպրոցներում իրականացնում են ուսումնական վարժություններ՝ նվիրված հակառակորդի կողմից հանկարծակի օդային հարձակումներին դիմակայելուն: Այս գործողությունը պետք է կատարեն աշակերտը, ուսուցիչը, տնօրենը:

Թաքստոցների, ապաստարանների վերաբերյալ դպրոցների հետ համագործակցությունների և կատարած աշխատանքների մասին իր դիրքորոշումը հայտնեց ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճամբարակի թիվ 35 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փրկարարական ծառայության փոխգնդապետ Ռուբեն Գրիգորի Օհանյանը:

Միջոցառումները կատարվում են ոչ միայն թաքստոց ունեցող հաստատություններում, այլ նաև այն դպրոցներում և մանկապարտեզներում, որտեղ չկան թաքստոցներ կամ թերի են: Օրինակ՝ Վահան գյուղը, որը կարելի է անվանել ոչ թե սահմանամերձ, այլ սահմանապահ գյուղ, նույնպես չունի թաքստոցները, չնայած որ անհատներից շատերը իրենց բնակարաններում ստեղծել են այդ պայմանները: Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ջանքերի շնորհիվ Վահան գյուղում թաքստոցներ են կառուցվում, որոնք համարվում են իրականացվող միջոցառումները իրենց դրական արդյունքն են տալիս: Պաշտպանության վերջերս կատարված իրադարձությունների ժամանակ ազգաբնակչության ճիշտ դրսևորումը: Մենք մեր ուսուցումը և իրազեկումները տալիս ենք ոչ միայն ուսումնական-տակտիկական վարժությունների միջոցով, այլև մեր գերիագետների և լեկտորների էջով: Գեղարքունիքի մարզային փրկարարական ջոկատը համագործակցում է համայնքապետարանների և ուսումնական բոլոր հաստատությունների հետ: Իրականացվում է համապատասխան իրազեկում, կատարվում են փորձնական տարհանումներ և ազդանշանային տազնապի ժամանակ կատարվելիք գործողություններ: Լուսն ենք առաջարկություններ, կատարում ենք քննարկումներ: Մենք՝ ճամբարակի բնակիչներս, պատերազմ տեսած և նրա բովոլ անցած մարդիկ ենք և պատրաստ ենք դիմակայելու: Ցանկացած հարցի մոտենում ենք գիտակցաբար և փորձում ենք գործնականում ու տեսականում համատեղել: Պարտադիր են համարում հաճախակի սեմինար պարապմունքների անցկացումը, որը կնպաստի ավելի գիտակցաբար մոտենալ թաքստոցների ստեղծմանն ու տարհանումների իրազեկման մասին տեղեկանալուն: Արտակարգ իրավիճակների նա-

խարարությունը ցանկանում է կԳՄՍ նախարարության հետ մշակել մի պլան, որ քաղաքացիական պաշտպանությունը դպրոցներում ներառվի որպես առարկա, որպեսզի ավելի խորը ուսուցանվի: Այս ամենը ամբողջացնելով մենք մեր պետության համար կարող են կերտել առաջնորդներ, ովքեր կարող են իրականացնել մեր վաղեմի երազանքները: Դրան հասնելու համար անհրաժեշտ են լավ մասնագետներ ցանկացած ոլորտում: Առաջնորդը պետք է ունենա մարդկային այն հատկանիշները, որը պահանջում է հասարակությունը՝ կազմակերպված և կազմակերպելու կարողություն ունենալու ծիրք, նա պետք է ճիշտ կարողանա գնահատել իրավիճակը և դասակարգել առաջնային և երկրորդական իրավիճակները: Առաջնորդը պետք է կարողանա թափանցել իր դիմացինի հոգին, որպեսզի ճիշտ լուծում տա ծագած խնդիրն, դրա համար պետք է զրագետ և խելացի լինի, տիրապետի տարբեր լեզուների՝ նույնիսկ թշնամու լեզվին,- նշեց Ռուբեն Օհանյանը:

Նա հարցին մոտեցավ մասնագիտորեն, քանի որ օբյեկտները ռազմավարական նշանակություն ունեցող շինություններ են, սակայն բավարար չեն, մշակվում են մեթոդներ, որ նկուղային շինությունները ծառայեն որպես թաքստոցներ, պաշտպանական միջոցներ բնակչության համար:

Մշակվում է ծրագիր, որը իրականացվելու է ուսումնական հաստատություններում և ազգաբնակչության հետ:

Ռուբեն Օհանյանը առաջարկում է, որ դպրոցներում ավելի մեծ նշանակություն տրվի քաղաքացիական պաշտպանությանը, որպեսզի մարդիկ հասկանան օդային տազնապի և տարհանման տարբերությունները:

-Մեր սերունդը, իմ կարծիքով, այս ամենը տեսնելով պետք է ավելի համախմբվի, իսկ այդ աշխատանքը պետք է սկսել դպրոցից, թույլ չտալ, որ ներկա սերունդը հուսալքվի, քանի որ դպրոցահասակների մոտ անցումային շրջան է, և նրանք պետք է ճիշտ ուղու վրա կանգնեն: Մեր զինվորը միշտ էլ մարտունակ է, իսկ մեզ անհրաժեշտ է շատ մեծ սպառազինություն, որպեսզի կարողանանք այս մարտահրավերներին դիմակայել,- եզրափակեց Ռուբեն Օհանյանը:

**1+1 թերթի խմբագրություն**

## ՇՆՈՒՆԴԴ ԵՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՅ ԶԻՆՎՈՐ



«1 + 1» դպրոցական թերթի խմբագրությունը և Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները ջերմորեն շնորհավորում են Հայոց բանակի անվեհեր հայրորդի Ռազմիկ Հակոբի Պետրոսյանին՝ ծննդյան օրվա առթիվ:

Ցանկանում ենք, որ նա պատվով կատարի իր պարտականությունները և անփորձանք վերադառնա տուն:

## ԻՆՉ ԵՄ ՈՒՋՈՒՄ ԴԱՌՆԱԼ

-Ես սովորում եմ Գավառ քաղաքի դպրոցները մեկում, ինձ հուզող հարցը այն է, թե ես ինչ եմ ուզում դառնալ: Մի տարի հետո ես դպրոցը ավարտելու եմ, բայց ամաչում եմ ասել, որ դեռ չեմ կողմնորոշվել: Մայրս աշխատում է բյուջետային բնագավառում, նա խորհուրդ է տալիս իր բնագավառի մասնագիտությունը, հայրս շինարար է, նա էլ ուզում է, որ իմ ընտրած մասնագիտությունը ինձ տա ֆինանսական բավարարություն: Մի խոսքով, շատ կարծիքներ և ոչ մի կոնկրետ հավանություն իմ կողմից ոչ մի մասնագիտության նկատմամբ: Հարգելի՛ խմբագրություն, ձեր կարծիքով ինչպես ճիշտ ընտրել մասնագիտություն, որը իմ հետագա կյանքում կլինի ֆինանսական առու-

մով կայուն, ու ես կսիրեմ այդ մասնագիտությունը և հաճույքով կզնամ գործի:

Պատասխան

Մենք բոլորս էլ փնտրել ենք, փնտրում ենք այդ էլիքսիրը, բայց իրողությունը այնպիսին է, որ կյանքի տարբեր փուլեր բերում են տարբեր առաջնային խնդիրներ, ամենազխալվորը՝ երբեք պետք չէ առաջնորդվել միայն ֆինանսական բարեկեցության պայմանով, բայց դա չի նշանակում, որ ձրի պետք է աշխատել: Եթե դու լինես պրոֆեսիոնալ քո բնագավառում, այն կունենա իր ֆինանսական զնահատականը: Այսօր մեր հայրենիքը գտնվում է այնպիսի վակուումի մեջ, որ միայն կոյրը չի տեսնի մեր թերությունը, եթե դուք դառնաք պրոֆե-

սիոնալ այդ թերությունների բնագավառում, դուք և ձեր ծնողները կլինեք գոհ ձեր ընտրությամբ: Օրինակ՝ զինվորական, դատավոր, արտաքին հարաբերության բնագավառի, կառավարման բնագավառի աշխատող, և այլն: Միգուցե դուք մտածեք, թե ով կրողնի, որ դուք ձեզ դրսևորեք: Ասեն, որ միայն պրոֆեսիոնալն է ձգտում դառնալ այն մասնագետը, ով հավասարապես է գնահատվում առաջադեմ երկրներում, բայց դրա համար պետք են պատասխանատվություն ու քրտնաջան աշխատանք:

**1+1 թերթի խմբագրություն**



### ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԱՇԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ



Կարատեով զբաղվողը պետք է ճիշտ կատարի այն բոլոր վարժությունները, որը ասում է մարզիչը, և կրկնի մի քանի տասնյակ հազար անգամ: Մարզումների ընթացքում ընկալում են հիմնական վարժանքները: Երկրորդ կետում վարժությունները ավելի են բարդանում, նրանց կցվում են ուսումնական մարտերը: Եվ նորից ամեն ինչ կրկնվում է շատ ու շատ անգամ: Եվ երբ դու դուրս ես գալիս իսկական մարտի, բոլոր շարժումները տեղի են ունենում ինքնաբերաբար: Ու չպետք է մտածել ինչ գործողություն անելու մասին, դրա համար սկզբում պետք է անել այն, ինչ քեզ ասում է մարզիչը: Այդ նույնը կարելի է ասել մնացած մարզիկների համար. պետք է անել այն հանձնարարությունը, որը տալիս է ձեր մարզիչը: Եթե դուք ուզում եք դառնալ երաժիշտ, լսեք ձեր երաժշտության դասախոսին:

Եթե դուք ուզում եք կրկնապատկել ձեր եկամուտը, ինչպես հասնել բարձր աշխատավարձի: Ի սկզբանե պետք է անել այն, ինչ որ անում են հաջողակ մարդիկ, քանի որ համաձայն պատճառի և հետևության օրենքի՝ դուք կստանաք այդ արդյունքը: Այստեղ չկա ոչ մի գաղտնիք:

**Երկրորդ** հավատքի օրենքն է: Համաձայն այդ օրենքի այն ինչին դուք հավատում եք հոգով և հասկացողությամբ, դուք հասնելու եք կյանքում:

Ենթադրենք՝ ձեզ ուզում են ծանոթացնել շատ հաջողակ մի մարդու հետ. նա սկսել է գրոյից, իսկ հիմա նրա ունեցվածքը կազմում է մի քանի հարյուր միլիոն դոլլար, չնայած դրան նա շատ համեստ է: Այդ մարդը չի կրում թանկարժեք շորեր և չի սիրում պատմել իր ըն-

տանիքի մասին: Ծանոթանալով այդ մարդու հետ՝ դուք լցվում եք հավատով, որ նա հարուստ է, խելոք է և տաղանդավոր: Ինչպես դուք նրա հետ կվարվեք, երևի հարգանքով, դուք կսկսեք լսել նրա բոլոր խոսքերը, և այն ամեն ինչի մասին նա կասի, դա դուք կհամարեք վերջին ատյանի ճշմարտությունը. այդպես է հավատքի օրենքը ստեղծում ձեզ համար առօրյա:

**Երրորդ** սպասողության օրենքն է:

Այն, ինչ դուք ստեղծում եք համոզմունքով, միշտ կատարվում է: Գոյություն ունի սպասողականության չորս բաժին:

**Սուաջինը** ձեր ծնողների սպասումն է ձեզանից:

Երջանիկ, առողջ և ակտիվ երեխաներ դաստիարակելու համար, ովքեր հետագայում կլինեն հաղթողներ և հաջողակ մարդիկ, պետք է առաջին հերթին դեմոկրատական միջավայր, որտեղ երեխայի կարծիքը հարգվում է և հաշվի է առնվում: Ընտանիքում բոլորը լսում են միմյանց, և երեխաների ցանկությունը կատարվում է:

Օրինակ՝ եթե դուք ամիսը մի քանի անգամ գնում եք ինչ-որ տեղ պաղպաղակ ուտելու, հերթով հարցրեք ամեն անգամ ձեր երեխաներին ուր կուզենայիք, որ մենք գնայինք, և ընտանիքի բոլոր անդամներով կատարեք նրա կամքը: Մյուս անգամ երեխային էլի հարցրեք: Երեխան կմեծանա իր վրա վստահ, որ իր կամքը հաշվի է առնվում:

**Երկրորդ** բնագավառը ուսուցիչների և ղեկավարների սպասումներն են ձեզանից:

Դա այն է, որ ուսուցիչները և ղեկավարները ներդրում են իրենց գիտելիքները և նյութական միջոցները և ուզում են աշակերտներից ու աշխատակիցներից ստանալ լավ

արդյունք. լավ և որակյալ աշխատանք:

**Երրորդ** բնագավառը ձեր սպասումներն են այն մարդկանցից, ովքեր պետք է բարձրանան ձեր մակարդակին, նրանց շարքերին կարելի է դասել երեխաներին, անուսնուն, բարեկամներին, աշխատակիցներին:

**Չորրորդ** բնագավառը սպասումներն են ինքդ քեզանից:

Դուք երբեք չեք հասնի մեծ հաջողության, եթե դուք ձեր հոգու մեջ անբողջությամբ ձեզ չեք հավատում:

Սպասումները ուղղորդվում են գործողությամբ, սպասումից է կախված ձեր հարաբերությունը գործի հետ:

Եթե դուք ուզում եք լինել հաջողակ ու ճանաչված, եթե ուզում եք քաղել դասեր բոլոր անհաջողություններից, դուք պետք է լինեք դրական, քանի որ դա է հաջողության հիմնաքարը:

Այդ բոլոր հարաբերությունները պարտադիր են խթանելու հաջողակ գործի ընթացքը: Ամեն ինչ սկսվում է արժեքներից, որոնք դուք համարում եք կարևոր ձեզ համար և որ հանդիսանում են նշանառման այն կենտրոնը, որը կազմված է տարբեր շրջանակներից, և նրանից է սկիզբ առնում համոզմունքը: Մյուս շրջանակը ձեր սպասումներն են:

Համոզմունքը ազդում է սպասողականի վրա, այսինքն՝ իր հերթին բացահայտում է ձեր հարաբերությունները գործին և գործընթացը բերում է արդյունքի:

Ամեն ինչի սկիզբը արժեքն է:

Ո՞վ եք դուք, ի՞նչն է ձեզ հատկապես անհանգստացնում: Դրանից է կախված ձեր համոզմունքը և ընդհանրապես ամեն ինչ:

**Մանուշակ Թովմասյան**

### ԻՆՉ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Բարև ձեզ, հարգելի՛ ընթերցող: Այսօր մենք կխոսենք պատասխանատվության անելիքի և պահվածքի, մարդկանց հարաբերությունների և անելիքների մասին:

Գաղտնիք չէ, որ մեզանից յուրաքանչյուրը որոշ ժամանակ անցկացնում է սոցիալական ցանցերում, դա նորմալ էրևույթ է, գրեթե 99% ինֆորմացիան հիմնված է տվյալ մարդու էմոցիոնալ, հոգևոր և այլ վիճակի վրա: Գրեթե բոլորը գիտեն ամեն ինչ և բոլորը սովորեցնում են ինչպես պետք է ապրել: Ինչպես պետք է իրեն դրսևորի դպրոցականը, երբ ամբողջ տեղեկատվական հարթակը բանդելուց, ոչնչացնելուց, թշնամանքից, կեղծ լուրերից ու բամբասանքից բացի, ոչինչ չի ներկայացնում: Ես շատ կուզեմ, որ ընթերցողը ունենա ինքը իրեն կողմնորոշվելու կարողություն այս տեղեկատվական ծախսի մեջ: Դրա համար օրինակներ պետք է վերցնել առաջադեմ երկրների պատմությունից, պետք է ընթերցել Ֆրանսիայի, Իտալիայի, ինչպես նաև Գերմանիայի վերջին 200 տարվա պատմությունը, որտեղ երևում է, թե ինչպես գերմանացիները մի քանի ճգնաժամային պարտություններից հետո փոխեցին դպրոցի նկատմամբ իրենց մոտեցումը: Մենք բոլորս էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչ ենք, և այն կանոնները, որոնք բերում են աշխարհը առաջընթացի, կբերեն և մեզ մոտ: Դրա համար պետք են ցանկություն և աշխատանք, սակայն ասենք, որ մենք ունենք ցանկություն, բայց չենք իմանում, թե ինչից սկսենք: Հարգելի՛ աշակերտներ, ու-

սուցիչները և ծնողներ, ձեր դպրոցներում կազմակերպե՛ք խմբակներ, ուսումնասիրե՛ք մեր պատմությունը, աշխարհի առաջադեմ երկրների պատմությունը, երբ այդ ամենը արվի, կհասկանաք, որ ֆեոդալական բարեկամական կապերը մեր տարածաշրջանում առկա են, որոնք պետք է փոխարինել պետականամետ և միայն պետական շահի ամրապնդման տանող հարաբերությունների, իսկ եթե ասենք ավելի կարճ ու դիպուկ, դա նշանակում է ժամանակ մի՛ վատնիր կերպարի վրա:

— Մի՛ սովորեցրու ուրիշներին ինչպես ապրել.

— Եղի՛ր առույգ, ուշադիր քո շրջապատի հանդեպ.

— Ամենագլխավորը՝ արա այն ամենը, ինչը որ դու լավ ես անում, օրինակ՝ եթե դու 9-րդ դասարանի աշակերտ ես, արժանացի՛ր ժամը 7-ին, վարի՛ր առողջ ապրելակերպ.

— Կրկնի՛ր քո դասերը, իսկ եթե հանգստյան օր է, օգնի՛ր ծնողների, կարդա՛ գրքեր, խաղա՛ փողոցում, մի՛ նեղացրու թուլիք, մի՛ եղիր ցուցամուկ, համացանցում քիչ ժամանակ անցկացրու՝ մի՛ վախեցիր աշխատանքից:

Եթե դու լինես այդպիսին, ապա կհամարվես հասարակությանը պիտանի և պետականամետ մարդ, և ինչքան շատ լինեն այդպիսի երեխաներ, այդքան շուտ կմոտենա մեր պետականության վերածնունդը:

1+1 թերթի խմբագրություն



**ԿՐԻՐ ԴԻՄԱԿ,  
ՓՐԿԻՐ  
ԿՅԱՆՔԵՐ**

**4** «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ  
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1  
Փոստային դասիչ՝ 1207  
Թողարկման օրը՝ 27. 01. 2021 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան  
Տպաքանակը՝ 2000  
Հեռախոս՝ 093919658:  
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru  
Կայք էջ՝ 1e1.hայ, 1u1.am